Արձանագրություն N 2

ԾՔ-ՀՄԱ-ԱՇՁԲ-17/9 ծածկագրով ՀՄԱ ընթացակարգով հայտարարված Ծաղկաձոր համայնքի կարիքների համար ջրահեռացման ցանցի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք.Ծաղկաձոր 15 դեկտեմբերի 2017թ.
ժամը 10:00

Մասնակցում էին հանձնաժողովի

նախագահ՝ Ն.Խաչատրյան

անդամներ՝ Լ.Խաչատրյան/բացող/

Ա.Մեսրոպյան/բացող/

Վ.Ամիրխանյան/գնահատող/

Վ.Հայրապետյան/գնահատող/

քարտուղար՝ Ա.Ավետիսյան

1. Տեղեկություններ ԾՔ-ՀՄԱ-ԱՇՁԲ-17/9 ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

(Ն.Խաչատրյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2017 թվականի դեկտեմբերի 15-ին, ժամը 10:00-ին,Ծաղկաձորի համայնքապետարան, ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

2. ԾՔ-ՀՄԱ-ԱՇՁԲ-17/9 ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակցի մասին

(Ն.Խաչատրյան)

Գնման ընթացակարգին հայտ ներկայացրել է հետևյալ մասնակիցը.

հ/հ	Մասնակցի անվանումը և հասցեն
1	«Բագրատունի» ԱԿ Գեղարքունիքի մարզ, գ. Դդմաշեն

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

3. Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի մասին

(Ն.Խաչատրյան)

3.1 ՀՄԱ ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացվել է հետևյալ գնային առաջարկը.

Չափաբաժին	Մասնակցի անվանումը	Նախահաշվայի ն արժեքը	Առաջարկված գինը առանց ԱԱՀ	ԱԱՀ	Առաջարկված գինը

Ջրահեռացման ցանցի կառուցման աշխատանքներ	«Բագրատունի» ԱԿ	820000 /ութ հարյուր քսան հազար/	800000/ութ հարյուր հազար/	-	800000/ութ հարյուր հազար/

3.2 Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկում չկան թվաբանական անճշտություններ:
Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

4. Տվյալներ բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Ն.Խաչատրյան)

Համապատասխանում է՝ «Բագրատունի» ԱԿ-ի կողմից ներկայացված հայտը:
Նախնական տվյալներով՝
1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Բագրատունի» ԱԿ-ին /միակ մասնակից և հրավերի պահանջներին համապատասխանություն/:
Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

4.1 Գնահատող հանձնաժողովը որոշեց armeps.am համակարգով վերջացնել գնահատումը, որից գնահատման հաշվետվության բեռնումից հետո /Evaluation/ 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների մասով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ հարցում կատարել ՀՀ ԿԱ Պետական Եկամուտների Կոմիտե, ինչպես նաև նույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ծանուցում ուղարկել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին՝ 3 /երեք/ աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման համար :

5. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ն.Խաչատրյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2017 թվականի դեկտեմբերի 19-ին, ժամը 11:00-ին, Ծաղկաձորի համայնքապետարանի վարչական շենքում, ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9 հասցեում:
Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Ն.Խաչատրյան

անդամներ՝ _____ Լ.Խաչատրյան

_____ Ա.Մեսրոպյան

_____ Վ.Ամիրխանյան

_____ Վ.Հայրապետյան

քարտուղար՝ _____ Ա.Ավետիսյան